Համաձայնագիր
Ամերիկայի Միացյալ Նահանգների Պաշտպանության Դեպարտամենտի և Հայաստանի Հանրապետության XXXXX միջև

Կենսաբանական զենքերի ստեղծման մեջ օգտագործվելիք տեխնոլոգիայի, պաթոգենների և փորձառության տարածման կանխարգելման ոլորտում համագործակցության մասին

Ամերիկայի Միացյալ Նահանգների Պաշտպանության Դեպարտամենտը («Պաշտպանության Դեպարտամենտ») և Հայաստանի Հանրապետության XXX -ը («XXX»), այսուհետ միասնաբար վկայակոչվելով որպես Կողմեր՝

ցանկություն ունենալով կատարել Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև Զանգվածային բնաջնջման սպառազինությունների հակատարածման ոլորտում համագործակցության մասին 2000թ. հուլիսի 24-ին կնքված համաձայնությունը (այսուհետև՝ Համընդգրկուն համաձայնագիր), որը վերաբերում է կենսաբանական զենքերի մշակման մեջ օգտագործվելիք տեխնոլոգիայի, պաթոգենների և փորձառության տարածման կանխարգելմանը,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված I

1. Հայաստանի Հանրապետության հիմնարկներում տեղակայված՝ կենսաբանական զենքերի ստեղծման ոլորտում օգտագործվելիք տեխնոլոգիայի, պաթոգենների և փորձառության տարածումը կանխարգելելու գործում Հայաստանի Հանրապետությանը օժանդակելու, կենսաահաբեկչական հարձակումների և հնարավոր պանդեմիաների հայտնաբերման, ախտորոշման և դրանց մասին տեղեկացման կարողականությունը խթանելու և կենսաահաբեկչության դեմ պայքարելու համար ռազմավարական հետազոտության գործընկերություններ ստեղծելու նպատակով Պաշտպանության Դեպարտամենտը կարող է աջակցություն տրամադրել XXX –ին կամ նրա նշանակած իրականացնող գործակալներին անվճար՝ այս Համաձայնագրի կետերին համապատասխան:

2. XXX-ը և նրա նշանակած իրականացող գործակալները պետք է օգտագործեն բոլոր նյութերը, ապրանքները, սարքավորումները, պիտույքները, տեխնոլոգիան, վերապատրաստումը և ծառայությունները, որոնք տրամադրվում են այս Համաձայնագրով,Հայաստանի Հանրապետությունում այն տեխնոլոգիայի, պաթոգենների և փորձառության տարածումը կանխարգելելու նպատակով, որոնք կարող են օգտագործվել կենսաբանական զենքի ստեղծման ոլորտում՝ խթանելով կենսաահաբեկչական հարձակումների և հնարավոր պանդեմիաների հայտնաբերման, ախտորոշման և դրանց մասին տեղեկացման կարողականությունը և ստեղծելով ռազմավարական հետազոտության գործընկերություններ՝ կենսաահաբեկչության դեմ պայքարելու նպատակով:

3. Սույն Համաձայնագիրը և այս Համաձայնագրի համաձայն իրականացվող ողջ գործունեությունը կարգավորվում է Համընդգրկուն Համաձայնագրի դրույթներով: Այս Համաձայնագրի և Համընդգրկուն համաձայնագրի միջև ցանկացած անհամապատասխանության դեպքում գերիշխում են Համընդգրկուն համաձայնագրի դրույթները:

Հոդված II

1. Սույն Համաձայնագրի յուրաքանչյուր Կողմ իրավունք ունի, մյուս Կողմին գրավոր ծանուցումից հետո, Համաձայնագրի իրականացման պատասխանատվությունը պատվիրակել այլ կազմակերպությունների, բաժինների, գործակալությունների կամ իրենց համապատասխան կառավարությունների ստորաբաժանումներին:

2. Սույն Համաձայնագրի ներքո գործունեությունների համակարգման նպատակով յուրաքանչյուր Կողմ իրավունք ունի, մյուս Կողմին գրավոր ծանուցումից հետո, նշանակել նյութերի, վերապատրաստման և ծառայությունների տեխնիկական ներկայացուցիչներ՝ սույն Համաձայնագրին համապատասխան:

Հոդված III

1. Պաշտպանության Դեպարտամենտի համար բոլոր նյութերի, ապրանքների, սարքավորումների, պիտույքների, տեխնոլոգիայի, վերապատրաստման և ծառայությունների ընդհանուր արժեքը, որը տրամադրվում է համաձայն սույն Համաձայնագրի, և առնչվող այլ ծախսեր, այդ թվում՝ նյութերի և անձնակազմի փոխադրման ծախսերը, չպետք է գերազանցեն հինգ (5) միլիոն ԱՄՆ դոլարը:

2. Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր պաթոգենների հափշտակման կամ չլիազորված օգտագործման վտանգը նվազեցնելու նպատակով՝ համաձայն Հոդված I-ի, պարբերություն 1-ի՝ Պաշտպանության Դեպարտամենտի կողմից XXX –ին տրամադրված աջակցությունը կարող է ներառել (և չսահմանափակվել)՝ համատեղ կենսաբանական հետազոտությունների կատարում, կենսաբանական սպառնալիքի ագենտների հայտնաբերում ու դրանց հակազդում, և կենսաբանական նյութերի պաշտպանության, վերահսկման և հաշվետողականության բարելավման ոլորտում աջակցություն:

3. Համաձայն սույն Համաձայնագրի պայմանների, Պաշտպանության Դեպարտամենտը կարող է իր հայեցողությամբ XXX –ին տրամադրել այլ տեսակի օգնություն՝ Կողմերի միջև գրավոր համաձայնության դեպքում:

Հոդված IV

1. XXX-ը պետք է օժանդակի Պաշտպանության Դեպարտամենտին սույն Համաձայնագրի իրականացման ընթացքում:

2. XXX –ը պետք է համապատասխան նախարարությունների և Հայաստանի Հանրապետության կառավարության այլ գործակալությունների ու կազմակերպությունների հետ համակարգված աշխատի՝ երաշխավորելու, որ

(ա) սույն Համաձայնագրով տրամադրվող նյութերին, ապրանքներին, սարքավորմանը և պիտույքներին տրամադրվում է արտահերթ ձևակերպում, որպեսզի հնարավոր դառնա դրանց արագ առաքումը դեպի Հայաստանի Հանրապետության սահմաններից ներս գտնվող նրանց վերջնական նպատակակետը և

(բ) Պաշտպանության Դեպարտամենտի ներկայացուցիչների, կապալառուների, և սույն Համաձայնագրին առնչվող հիմնարկություններում գտնվող սարքավորումների համար ապահովվում են անվտանգության անհրաժեշտ միջոցառումները:

3. XXX-ը պետք է դյուրին դարձնի համապատասխան նախարարությունների և Հայաստանի Հանրապետության կառավարության այլ գործակալությունների և կազմակերպությունների կողմից սույն Համաձայնագրով ստացված բոլոր նյութերի, ապրանքների, սարքավորումների և պիտույքների զննումը և Պաշտպանության Դեպարտամենտին հաստատի նման նյութերի ընդունելիությունը՝ նշված զննումների արդյունքների ստացումից հետո տաս [10] օրվա ընթացքում: Նյութերը, որոնք չեն համապատասխանում նախօրոք փոխհամաձայնեցված հատկորոշումներին, պետք է վերադարձվեն Պաշտպանության Դեպարտամենտի միջոցների հաշվին, Պաշտպանության Դեպարտամենտին, Հայաստանում Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանատան միջոցով՝ փոխարինման մասին ծանուցումից հետո երեսուն (30) օրվա ընթացքում:

4. XXX-ը կամ նրա նշանակած իրականացնող գործակալները պետք է համախմբեն և պահեստավորեն վտանգավոր բոլոր պաթոգենները՝ Կողմերի միջև փոխհամաձայնեցված տեղանքում:

5. XXX-ը կամ նրա նշանակած իրականացնող գործակալները պետք է Պաշտպանության Դեպարտամենտին փոխանցեն պահանջված վտանգավոր պաթոգենների նմուշները, որոնք հավաքվել են Հայաստանի Հանրապետությունում պրոֆիլակտիկ, պաշտպանական կամ այլ խաղաղ նպատակներով: XXX-ը պետք է համաճարակաբանական տվյալները տրամադրի նաև Պաշտպանության Դեպարտամենտին, որպեսզի Կողմերն առավել արդյունավետ հայտնաբերեն, ախտորոշեն և վերահսկեն հիվանդությունների բռնկումները Հայաստանի Հանրապետությունում:

6. Վտանգավոր պաթոգենները, որոնք տեղակայված են փոխհամաձայնեցված տեղանքում, պետք է մնան այնտեղ Համընդգրկուն համաձայնագրի իրականացման ողջ ընթացքում, եթե դրանք չեն ոչնչացել կամ դրանց տեղափոխման վերաբերյալ գրավոր համաձայնություն չի կայացվել Կողմերի միջև:

7. XXX-ը կամ նրա նշանակած իրականացնող գործակալները պետք է համագործակցեն Պաշտպանության Դեպարտամենտի հետ տարեկան կտրվածքով մշակելով համատեղ պահանջների և իրականացման պլան (ՀՊԻՊ) որում նկարագրվեն սույն Համաձայնագրի ներքո նախաձեռնված յուրաքանչյուր ծրագրի հիմքում ընկած նկատառումները, պահանջները և պարտականությունները:

Հոդված V

Ի հավելում Համընդգրկուն համաձայնագրի Հոդված 11-ով ամրագրված՝ աուդիտի և զննման իրավունքների, Պաշտպանության Դեպարտամենտի ներկայացուցիչներն իրավունք կունենան վերահսկել պայմանագրերի պայմանների կատարումը և սույն Համաձայնագրի ներքո իրականացված գործունեության ընթացքը՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող հիմնարկություններում:

Հոդված VI

Անհրաժեշտության դեպքում Կողմերը կարող են կայացնել իրականացման լրացուցիչ պայմանավորվածություններ կամ սույն Համաձայնագրի դրույթների կատարման համաձայնություններ: Սույն Համաձայնագրի և նման պայմանավորվածությունների կամ

համաձայնությունների միջև ցանկացած անհամապատասխանության դեպքում գերակշռում են սույն Համաձայնագրի դրույթները:

Հոդված VII

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և շարունակում է գործել Համընդգրկուն համաձայնագրի իրականացման ողջ ընթացքում: Սույն Համաձայնագիրը կարող է փոփոխվել Կողմերի գրավոր համաձայնությամբ և դադարեցվել Կողմերից յուրաքանչյուրի կողմից մյուս Կողմին նման նպատակադրվածության մասին իննսուն (90) օր առաջ գրավոր ծանուցելուց հետո: Անկախ այս Համաձայնագրի ընդհատումից, այս Համաձայնագրի Հոդված IV-ի, պարբերություն 6-ի դրույթներն ուժի մեջ կլինեն Համընդգրկուն համաձայնագրի իրականացման ողջ ընթացքում:

Ի ՀԱՍՏԱՏՈՒՄՆ ՈՐԻ, ներքոստորագրյալները, լինելով պատշաճորեն լիազորված իրենց համապատասխան կառավարությունների կողմից, ստորագրել են սույն Համաձայնագիրը:

ԿԱՏԱՐՎԱԾ է Վաշինգթոնում, այս ____ օրը _____, 200__, և Երևանում, այս ____ օրը _____, 200__, երկու օրինակով, յուրաքանչյուրն անգլերեն և հայերեն լեզուներով, երկու տեքստերն էլ հավասարազոր են:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊԱՐՏԵՄԵՆՏ	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ XXX